ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» հոկտեմբերի 2024թ. **N ----- Ա**

ՈՐՈՇՈՒՄ

ԲԱՐՍԵՂ ՌՈԲԵՐՏԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 35-րդ կետի դրույթներով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի փետրվարի 12-ի N 604-Ն որոշման N 1 հավելվածի 46-րդ կետի 1-ին ենթակետով, 56-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի առաջարկությունը.

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան քաղաքի 2806-րդ տարեդարձի առթիվ, Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում ներդրած նշանակալի ավանդի համար օպերային երգիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Բարսեղ Ռոբերտի Թումանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ–ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԲԱՐՍԵՂ ՌՈԲԵՐՏԻ ԹՈՒՄԱՆՅԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բարսեղ Թումանյանը ծնվել է 1958 թվականին, Երևանում:

Սովորել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի երգեցողության բաժնում:

1982-1983 թվականներին երգել է Միլանի «Լա Սկալա» օպերային թատրոնում:

1985 թվականին ուսումը շարունակել է Մոսկվայի կոնսերվատորիայում:

1980 թվականից եղել է Երևանի Օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի մեներգիչ, այնուհետև՝ Ռուսաստանի զինված ուժերի Ալեքսանդրովի անվան անսամբլի մենակատար: 1988 թվականի Սպիտակի երկրաշարժից հետո մասնակցել է Լոնդոնի Քովենտ Գարդենում կազմակերպված և «Ինտերվիժն» ծրագրով ողջ Եվրոպայում հեռարձակված համերգին և կատարել Աթիլլայի արիան Վերդիի համանուն օպերայից: 1990 թվականին ելույթ է ունեցել Լոնդոնի «Վիգմոր» դահլիճում, որը նրան մեծ հռչակ է բերել: 1990-ականների սկզբերին ելույթներ է ունեցել եվրոպական քաղաքներում, Ավստրալիայում, որտեղ արժանացել է Հատուկ մրցանակի՝ «Ֆաուստ» օպերային ներկայացման մեջ Մեֆիստոֆելի դերի համար: 2002-2005 թվականներին մենահամերգներով հանդես է եկել ԱՄՆ-ի, Ավստրիայի, Կանադայի, Գերմանիայի, Չինաստանի, Ճապոնիայի բազմաթիվ քաղաքներում: Մասնակցել է նաև Սանկտ Պետերբուրգում անցկացվող հայ մշակույթի օրերին:

Ընտրվել է Բնության և հասարակության մասին գիտությունների միջազգային ակադեմիայի փոխնախագահ:

2000 թվականից հանդիսանում է Բարձր արվեստի համաժողովի հայկական մասնաճյուղի նախագահը:

2010 թվականին Երևանում ելույթ է ունեցել օպերային երգիչ Պլասիդո Դոմինգոյի հետ: 2014 թվականից Բարսեղ Թումանյանը Աստանայի օպերային թատրոնի առաջատար մեներգիչ է:

Հանդես է եկել Քովենթ Գարդենում, Կոլոն թատրոնում, Լոս Անջելեսի, Վաշինգտոնի օպերային թատրոններում, Մետրոպոլիտեն օպերայում, Վիկտորիայի օպերային թատրոնում, Սիդնեյի օպերային թատրոնում, Մյունխենի պետական օպերային թատրոնում, Կոնսերտգեբաուում (Ամստերդամ), Վիեննայի պետական օպերայում, Բաստիլի օպերայում, Մարսելի օպերայում, Փարիզի բերսի համալիրում, Լիոնի ազգային օպերայում և այլ հռչակավոր օպերային և ֆիլհարմոնիկ բեմահարթակներում:

Վարպետության դասեր է անցկացնում աշխարհի տարբեր համալսարաններում և կոնսերվատորիաներում՝ Մարսել, Տորոնտո, Մոնրեալ, Վայմար, Կիցբյուել, Բեռլին, Շիյան, Թեհրան: Աստանայի ազգային համալսարանի պրոֆեսոր է:

2018 թվականին ամերիկյան Գլենդել քաղաքում մասնակցել է «Բարսեղ Թումանյան և ընկերներ» գալա համերգին: Ղազախստանի արվեստների ազգային համալսարանի պրոֆեսոր է:

Բարսեղ Թումանյանը Ռամֆիսի դերերգով հանդես է եկել Ֆրանկո Զեֆֆիրելլիի բեմադրությունում, Սիրտանիի դերերգով՝ Ղազախստանի Աբբայ ազգային օպերային թատրոնի Ջ. դել Մոնակոյի բեմադրությունում: 2018 թվականին հանդես է եկել Արշակի դերերգով՝ Տիգրան Չուխաջյանի Արշակ II օպերայում (Երևանի օպերայի և բալետի ակադեմիական թատրոն), Դոն Բազիլիոյի դերերգով՝ Ռոսսինիի Սևիլյան սափրիչը օպերայում (Աստանայի օպերային թատրոն):

Թումանյանը համագործակցել է հայտնի դիրիժորներ Ա. Պապպանոյի, Բ. Հայթինկի, Ի. Մարինի, Յու. Սիմոնովի, Մ. Վուն Չունգի, Յ. Ռուդելի, Վ. Աշկենազի, Ռ. Դիվալի, Գ. Ռոժդեստվենսկու, Ա. Լոմբարդի, Է. Թոփչյանի, Կ. Օրբելյանի, Մ. Էրմլերի, Մ. Վիոտտիի, Ջ. Ֆիորեի, Կ. Ռիցցիի և այլոց հետ:

2006 թվականին արժանացել է ՀՀ ժողովրդական արտիստի կոչմանը, 2013 թվականին՝ ՀՀ ԱԺ պատվավոր մեդալի:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով օպերային երգիչ, ՀՀ ժողովրդական արտիստ Բարսեղ Թումանյանի ներդրած նշանակալի ավանդը Երևան քաղաքի արվեստի զարգացման գործում՝ առաջարկվում է Բարսեղ Ռոբերտի Թումանյանին շնորհել «Երևանի պատվավոր քաղաքացի» կոչում և Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ